

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 24-Ի N
1048-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ» ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ**

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ

_____ 2021 թվականի N____ - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ
24-Ի N 1048-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ
հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության
կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի
հունիսի 24-ի «Հայաստանի Հանրապետություն թուրքական ծագում
ունեցող ապրանքների ներմուծման ժամանակավոր արգելք կիրառելու
մասին» N 1048-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ
լրացումները.

1)Որոշման 2-րդ կետը լրացնել նոր 6-րդ ենթակետով՝ հետևյալ
բովանդակությամբ.

«6) Սույն որոշման 2.1-րդ կետում նշված դեպքերում՝ մուտքի մաքսային
մարմնից առաքման վայր հասցնելու համար «Մաքսային
տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների վրա:».

2)Որոշման 2-րդ կետից հետո լրացնել նոր 2.1-րդ կետ՝ հետևյալ
բովանդակությամբ.

«2.1. Մուտքի մաքսային մարմնում բեռնաթափման գործողություններ
իրականացնելու անհնարինության դեպքում սույն որոշման 1-ին
կետում նշված ապրանքները կարող են ձևակերպվել «Մաքսային
տարանցում» մաքսային ընթացակարգով՝ պայմանով, որ դրանք

առաքման վայրից վերաարտահանվելու են Հայաստանի
Հանրապետության տարածքից՝ առաքման վայր ապրանքները հասցնելուց
հետո՝ առավելագույնը 30 օրվա ընթացքում:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը
հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ

Ն. ՓԱՇԻՆՅԱՆ